ԼՈՅՍ

ՀԱՆԳԷՍ ԱԶԳԱՅԻՆ

կը հրատարակուի Հորեքշաբթի եւ Շաբաթ օրերը: Տարեկան գինն է մէկ լիրա օսմանեան: Մէկ բերրը 40 փարա արծաթ: Նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Աւ. Մ. Ֆափամաճեան Կոստանդնուպոլիս, Մերձաւ ջարշի Բիւշտի Քէճէճտի խանի տակ Մ. Կ. Սարըեանի տպարանը:

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ **98** — **1880** — ՀՈՐԵՔՇԱԲԹԻ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՈՒՂԵՐՁ

Ազգային Ժողովին՝ ինչպէս յայտնի է, առ Ս. Պատրիարքն մատուցուելիք ուղերձը՝ զոր պատրաստած էր Աստենապետ Դիւանն, ուշադրութեան առաւ և անոր մէջ պակաս կէտերը նշմարելով՝ վիճաբանութիւնն յաջորդ նստին թողուլ որոշեց:

Ս. Պատրիարքն Ազգային Ժողովը բանալու առթիւ առ Գեր. Իզմիրլեան Սրբազան յղած գրոյն մէջ մեր Ազգային ներքին գործոց վիճակին երեսփոխանաց խորին ուշադրութեանը կը յանձնէր և իրաց վիճակին չարունակութեան հետևանքն ու պատասխանատուութիւնն Ազգային Ժողովին կը թողուր:

Ներքին գործոց ծանրութիւնն արդէն զգալի լինելով՝ տարակոյս չկայ թէ Ժողովին Ուղերձին վրայ չէր կրնար հարևանցի տեսութեամբ մ՚անցնիլ, ուստի և մեծ իրաւունք ունէր խորին ուշադրութեան առարկայ ընելու, որովհետև ուղերձն ուրիշ բան չէ, բայց եթէ մէջոց մը, որով Ազգային Ժողովին անցելոյն նկատմամբ քննադատելի կէտերը կը պարզէ և ապագային համար ալ Գործադիր Իշխանութեան հետևելիք ընթացքն և ուղղութիւնը կը գծէ, և վարչութիւնն ալ ըստ այնմ իր ընելիքը կարդէ ու իր հիմնադիրը կը պատրաստէ:

Արդ, երբ Գործադիր Իշխանութեան Գլուխն իր բացման դրոյն մէջ մեր ազգային ներքին գործոց վիճակին վրայ խորին ուշադրութիւն կը հրաւիրէր, և բոլոր պատասխանատուութիւնն Ազգային Ժողովոյ վրայ կը թողուր, Ժողովն ի՞նչ պէտք էր ընել.—պատրաստուած ուղերձը լռութեամբ ընդունելով՝ ապագայ պատասխանատուութիւնն իր վրա՞յ առնէ, թէ ի՛նչ որ պէտք է ըսել, գրել ու յանձնարարել:

Հարկաւ այս վերջինն ընելու համար Ժողովը մեծ խմաստութեամբ վարուելով՝ խնդիրը վիճաբանութեան ենթարկելու որոշում տուաւ:

Ժողովին այս որոշումն ապագային համար խիստ օգտակար է, ուստի և ժամանակ է որ այլ ևս վախճան տրուի իրայ ներկայ ընթացքին, այն է, ներքին դործոց անկերպարան կացութեան, որ արդէն ծանրացած է, և ժողովին ալ բնականաբար չկրնար լուծումեամբ անցնիլ, և եթէ անցնի, իր նուիրական պատասխանութեանը դէմ կը մեղանչէ, որովհետև համայն Թուրքիոյ ազդայնոց ակնկալութիւնն իր վրայ կեդրոնացած է և իրայ վիճակին բարւոքումն իրմէ միայն կսպասուի և Պատրիարք ու Վարչութիւն իրենց հետևելիք ուղղութեանն համար ժողովին հանդիսաւոր որոշմանը պէտք ունին։

Թէ ի՛նչ է մեր ներքին կացութիւնն և ի՛նչ հարկաւոր է, չենք ուզեր վերստին անդրադառնալ, որովհետև անոնց վրայ արդէն պէտք եղածը խօսած և ըսած ենք։

Հետևաբար Ազդային ժողովոյ նիստը՝ յառաջիկայ ուրբաթ, սեպտ. 25ին տեղի պիտ ունենայ, մեծ կարևորութիւն ունի, և պէտք է իւրաքանչիւր երեսփոխան անպատճառ ներկայ գտնուի։

ՆՈՐ ՊԱՏՏՕՆԱԿՈՒԹԻՒՆ

Կ'ըմանամք թէ Ազդային ժողովոյ Մայր Դիւանը վարչական կազմակերպութեան նոր օրէնքն ի գործադրութիւն Ս. Պատրիարք Հօր յանձներ է ի պաշտօնէ։ Կ'ըսուէր թէ նոր պաշտօնէութիւնը կազմելու պաշտօնը Ն. Սրբազնութիւնը Եպիսկոպեան էֆէնտիի յանձներ է, սակայն կը տեղեկանանք թէ Ս. Պատրիարքը չէ ուզեր ինքնին անօրէնութիւն մ'ընել, և կ'ըսուի թէ կուզէ եղեր որ ժողովը կատարէ։

Կրնայ ըլլալ որ Ն. Սրբազնութիւնը փափկութեամբ այսպէս խօսած ըլլի, և մեկուն մը այսպիսի պաշտօն յանձնելով չուզէ դուռ մ'ալ ուրիշ ինքնասիրութիւնը վիրաւորել։

Սրբ, եթէ ըսուածն ատյդ է, և եթէ ըստ այնմ՝ ճիշդ է մեր ենթադրութիւնը, ներում մեզ դիտել տալ Ն. Սրբազնութեան թէ պատճառ մը չունի, որովհետև ըստ նոր օրինաց վարուելով՝ Ազգին կամքը դործադրած պիտի լինի, և հետևաբար ոչ ոք իրաւունք ունի դիտողութիւն ընելու, մանաւանդ որ նոր պաշտօնէութեան կազմութիւնը նախապէս Ազգային ժողովոյ հաւանութեանն ու վաւերացմանը պիտի ներկայի, և եթէ ընդունուի, իր պաշտօնին պիտի ձեռնարկէ, և եթէ մերժուի, Ս. Պատրիարքը նոր ընտրութիւն պիտի կատարէ։

Ա.յսպիսի պարզ իրողութեան մ'առջև, որ ամեն քաղաքակիրթ ազգաց ընդունած սկզբունքն է, վարանումն ի՛նչ տեսութեամբ ալ լինի, աւելորդ է, որովհետև հասարակային գործոց բարւոք մատակարարութեանն համար ոչ թէ նկատում, այլ անկեղծութիւն, ճշդութիւն և օրինաց նախանձախընդրութիւն հարկաւոր է։

Ս. Պատրիարք Հօր անձին վրայ այս պայմանները չեն կրնար խնդրոյ ներքև հյնալ, ուստի և այս մասին զինքը քննադատելու պատճառ մը չունինք, և հետևաբար կը խնդրենք Ն. Սրբազնութենէն որ Ազգին տուած արտօնութիւնը բարեհաճի ի գործ դնել ըստ օրինի։

Աւով հասած պիտի լինի Ազգը տասը տարիէ ի վեր իր փափաքած վարչական կազմակերպութեան գործադրութիւնն իր մէջ տեսնել։

Կը յուսանք թէ Ս. Պատրիարքն առանց այլ ևս յապաղեցնելու՝ նոր պաշտօնէութեան կազմութիւնն ո՛րու որ ուզէ, յանձնել կը վարանայ։

ՄԻՈՒԹԻՒՆ

Թէրճէմանը–Հադիգաթ լրագիրն իր անցեալ աւուր թուոյն մէջ «ԼՈՒՍ» վերնա-

դրով յօդուածով մը միութեան յարդարելով Հայերը (.), Քուրդերը, Խալաճները, Գուլկարներն, Ցոյներն ու Հրեաները, միութեամբ գործելու օգուտներուն վրայ կը ճառէր։

Ոլսահեւս քիչ մը խելքը գլուխը եկած կը թուի, հիմա կրնանք իրեն հետ լրջութեամբ վիճաբանութեան մտնել։

Հայ Ազգն 500 տարիներէ ի վեր Օսմանեան տէրութեան հետ միաբանական ոգւով վարուած և այդ միութենէն բաժնուիլ ուզած չէ երբէք։

Հայ Ազգն իր բաղձանայ նոր ապագայից մ'ալ տալ ուզելով և տեսնելով որ միութեան կապը երկրին բարւոք է, որ վարչութեան մէջ բարենորոգումներ մտցընելով կ'ըլլայ, անկեղծութեամբ նորա գործադրութիւնը լնդրեց և կենդանի փաստերով հաստատեց թէ Հայաստանի մէջ բարենորոգմանց գործադրութիւնը միութեան և Օսմանեան պետութեան ամբողջութեանն համար ամենահարկաւոր է։

Ըսեր է որ անբաժան միութեան կապն ամրապնդելու փափաքն Հայք ունեցած են և ունին։

Թէրճէմանը–Հագիպաթի փափաքած միութիւնն ալ եթէ այս տեսակէտով է, խընդրոյն սկզբանը վրայ տարբերութիւն չկայ։

Իսկ եթէ մեր Թուրք պաշտօնակիցը խնդիրը տարբեր տեսակէտով կ'ըմբռնէ, և Հայաստանի մէջ առանձին բարենորոգումներ մտցնելու պէտքը չընդունիր, ներուի մեզ ըսել թէ խնդրոյն սկզբունքն իրեն համար դեռ լուսաբանուելու պէտք ունի, և մեք պատրաստ ենք իրեն հետ այս մասին ևս օրինաւոր վիճաբանութեան մտնել, և հետևաբար հարկ կ'ըդանք նախ սա կէտը պարզել թէ Հայաստանի մէջ առանձին բարենորոգումներ գործադրելը բոլորովին տարբեր բան է այն եղանակէն, որմէ այնքան կը խրտչէր, Քրդաց նկատմամբ Հայոց կողմէ վրէժխնդրութեան ոգի մը կասկածելով։

Մեր Թուրք պաշտօնակիցը պէտք է համոզուի թէ Հայք ինչ բան որ քաղաքակրթութեան հակառակ կը դանեն, զայն չեն գործեր, այլ ինչ որ քաղաքակրթութեան համաձայն կը դանեն, զայն կը գործեն։

Սպասուցանենք։

Լուսաւ կամ հաստատուած չէ թէ Հայք գիւղի մը վրայ խմբովին յարձակելով աւարառութիւն, առևանգութիւն և յափըշտակութիւն ընեն։

Այս մեկ կողմ։

Երկրորդ լուսաւ կամ հաստատուած չէ նաև թէ Հայք տէրութեան տուրքը վճարելու մասին դժկամակութիւն և դժուարութիւն յարուցանեն։

Ինչ է ուրեմն Հայոն խնդիրը։ — Իր բնակած երկիրներուն մէջ բարենորոգմանց գործադրութիւն և վարչութեան մէջ իր ալ մասնակցութիւնն, որ ոչ քաղաքակրթութեան և ոչ ալ տէրութեան օրինացն ու վհկ. Սուլթանին կամացն ու դիտաւորութեանցն հակառակ է։

Ուսաի Հայոց խնդիրն մեր Թուրք պաշտօնակիցը վախնալու բնաւ պատճառ մը չունի և պէտք չէ որ ունենայ, որովհետև Հայն ինչ որ կուզէ, տէրութենէն սատանալու կը փափաքի, և ոչ թէ այլոց պաշտպանութեանը շնորհիւ, որ իր շահուն համաձայն չգըտնէր, և հետևաբար Հայոց խնդիրը պէտք չէ Պուլկարական և կամ այլ տեսակէտով քննել։

Եթէ մեր Թուրք պաշտօնակիցը խնդիրը մեր բացատրած տեսակէտովը կ'ըմբռնէ և պէտք է որ ըմբռնէ, իր փափաքած միութիւնն արդէն ընդունուած է, և այս մասին բնաւ կասկած չկայ, որովհետև ամեն Հայ կ'ընդունի, և Ս. Պատրիարքն ալ 1878ի Ծրագրին մէջ այս կէտն ընդարձակօրէն բա-

ցառած է, և ինչպես որ տերութեան նախարարաց ալ հասկցուցած է։

Ա. յօր այսքանը բաւական կը համարիմք։

Ա.ԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութիւնը մայրաքաղաքիս իւրաքանչիւր թաղերէն մէյ-մէկ անձ հրաւիրած է իւր վաղուան նստին։

Սոյն հրաւիրանաց պատճառ՝ կը համարուի հայի լանդիրն, որ յիշեալ վուլթալեան հաստարձութեան խորին ուշադրութեանն ու հոգածութեանն առարկայ եղած է։

Աւելորդ է ըսել թէ ամեն կարգի ազգայինք յօժարակամ պիտի նուիրեն այս մասին իրենց դրամական լուման։

— Յոհանութեամբ կը տեղեկանամք թէ եկեղեցական ողջոյնը Մանասեանց ալ ըսկսեր է հանդանակութեան ձեռնարկել, և աղնիւ թաղեցիներէն ոմանք անցեալ կիրակի անձամբ խորհրդարան երթալով՝ հանգանակութեան մանակցեր են։

Աղնիւ եկեղեցւոյ այս ընթացքը կրնայ նախանձելի օրինակ մը լինել։

— Երախտագիտական զգացմամբ կը ծանուցանեմք թէ յառաջադիմասէր ազգայիններէ ոմանք գնեց մեր ընթացիքը մէջ քաջալերելու աղնիւ նպատակաւ որոշեր են Լոյսէն մէյ-մէկ օրինակ Հայաստանի կարօտեալ դաւառաց վարժարաններուն նուիրել։

— Խարբերդէն հասած գրութիւնք զարձեալ լի են տխուր տեղեկութիւններով, որ խորին ցաւ ու գանգատ կը յայտնես Ազգ. վարչութեան, առարկելով թէ իրենց վիճակըն ուշադրութեան չառնուիր.

Ա. յս տողերն յատկապէս Ս. Պատրիարք Հօր ուշադրութեանը կը յանձնեմք։

— Եւդոկիայէն գրուած նամակ մը Գեր. Վահան վարդապետին անդ ժամանելուն վերայ տեղացւոց ղգայած ուրախութիւնն յայտնելով՝ կ'աւելցնէ նաև թէ ամեն ոք իր աչքը Բարձր Հայոց Նախկին Պատուիրակին վրայ դարձուցած է, ուրկէ նոր սերունդը մանաւանդ օգտակար ձեռնարկութիւններ կ'ըսպասէ։

Մենք վստահ եմք թէ նոր սերունդն իր ակնկալութեանը մէջ պիտի չխաբուի. վասն զի Գեր. Վահան վարդապետ գործի մարդ է և ազգային յառաջադիմութեան անկեղծ բարեկամ։

— Յոհանութեամբ կը ծանուցանեմք թէ Մամիկոնեան Մեծ. Միքայէլ էֆէնտիի երորդ կարգի Մէճիտիէյէ պատուանշանը տըրուեցաւ։

Մամիկոնեան էֆէնտի արդէն արժանի էր աւելի մեծ պատիւներու, որովհետև արժանիք և քաջ հմտութիւն ունի և երկար տարիներէ ի վեր տերութեան հաւատարմաբար ծառայած է։

Միայն այսքան չէ։ Մամիկոնեան էֆէնտի այն կարգի պաշտօնատարներէն է, որ տերութեան ծառայած առէն Ազգն ալ չը մոռնար, ինչպես որ մինչև հիմա ուղղութեամբ ծառայած և ազգային բարձր պաշտօններ խղճի մտօք վարած է։

Ազգն իր ծառայութիւններն արդէն գնահատած և Ազգային Ժողովն ալ ղինքն այս անգամ Մայր Դիւանի անդամ ընտրած է։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ՋԱԻԵՇՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՇԱՀ. — Երեսը տեսած չ'ըլլալուս՝ դոյնը չեմ ճանչնար, ուստի և ածականն թէ գոյական ըլլալն ալ չեմ գիտեր, բայց կըրկին բառ մ'ըլլալն աղէկ գիտեմ և հետևաբար կը վճռեմ թէ անուն է, որուն կոչականը կըլլայ՝ «ով շահ» զոր չհոչդ չը կայ։

Վերջն առեյնելով « իմ » մասնիկը՝ կ'ըլլայ « չահիմ »՝ որ բայ է և կը խոնարհի , բայց ուրու առջև :

Այս խնդիրն ինձի համար խնդրոյ տակ է , ո. րովհետև ես չեմ չահիր , և կը հաստատեմ թէ Աղ. դին չահիրը պաշտպանելուս և անոր բուն պէտքերն իրեն ճանչցնելուս համար չեմ չահիր , չէի չահիր , չչահիրայ և չկրնեմ թէ ե՞րբ պիտի չահիմ :

Այս վերջինն ալ նոյնպէս խնդրոյ տակ է :

Իսկ սկիզբն « ան » մասնիկը կցելով՝ կ'ըլլայ ԱՆՇԱՀ , որ շատ յարմար կուգայ Ապդին Թշնամի թերթերուն :

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ . — Ըստ մասանց բանի՝ է անուն զրական , բայց բնաւ մարդու չհաւնող անգործ սկրուհոյ մը պէս մեր չահերէն հեռու վախչելուն՝ կը հետևցնեմ թէ կամ համաձայնութիւնը չատ նպաստը է , որուն ամեն տեսակ չահ իրր աճականն չյարմարիր , և կամ համաձայնութիւնն ըստ ինքեան անհամաձայնելի ըլլալուն համար անկարելի է .

ԴԻՏ . — Այս խնդիրն հիմա քերականական տատամսիայէն բժշկական տատամսիային քննութեանը ներկայացած է , որ չենք դիտեր թէ ինչ վճիռ պիտի տայ :

Այս մասին մեր խոնարհ կարծիքն՝ այն է որ յիշեալ տատամսիան առանց ազէկ մը անալիզ ընելու՝ փետուր գրչի ծայրով մ'անունը եթէ բայի դարձնելու որոշում տայ , չենք կարծեր որ իր որոշումն գիւրաւ յարգուի , և բիւրկաթիվի պէտք չմնայ . ուստի այս խնդիրը նախ բիւրկաթիվով ազէկ մը մարքելէ յետոյ՝ չէլիկ հասլի մը տալու , այսինքն՝ անոր վերջն անդամական մասնիկ մ'աւելցնելու է , որպէսզի խոնարհի :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Միացեալ Նահանգներն ինքզինք կը ցուցնէ (թող երթայ ցուցնէ , ի՞նչ կ'ըլլայ) . Ալպանիայիք կարևորութիւն տուած չեն (ինչո՞ւ տան) և Տուլչինեօն մերն է կ'ըսեն (իրաւունք ունին) . Եւրոպացիք ալ անպատճառ Գարաւոզի պիտի տաք կ'ըսեն (թէ որ տալը դիւրին է նէ թող իրենք ալ տան) . բալիքարներն ալ Եպիրոսը մերն է կ'ըսեն ու կ'ուզեն (ի՛նչ կ'ըլլայ , մենք ալ մերն է կ'ըսենք ու չենք խոսր) . բայց Եւրոպացիք մեր գիտցածը մեզի չեն թողուր կոր (մենք ալ անոնց գիտցածն իրենց չենք թողուր և անուշ անուշ նօթաներ կը գրկենք) . ազէկ սա անատեն ալ ճնշում կը բանեցնեն (ինչ կ'ըլլայ , մենք ալ Պէկեան Լիբէնտիին կ'ըսենք , որ անվիճապէս ճնշումին դէմ կը բողոքէ , որովհետև ազէկ փորձառու է) :

Շատ ազէկ , չատ ազէկ (հաւանութեան ցոյցեր) :

* * *

Եւրոպական թերթերը կ'ըսեն թէ . . . . . չէ , չեմ ըսեր , կը վախնամ , որովհետև բերանակապ կայ :

ՄԻՏՔՍ ԵԿԱՒ

Տակառափողոյի Ֆ. ընտանիքը , որ օգտախոհութեան (չէ , չէ , հէսկին) համար Իւսիւտար գացած է , հոն ալ ինքզինքը ցոյց տուաւ , ինչպէս որ երբեմն ցոյց տուած էր նախ սուսիկ բուսիկ աղջկիկ կարգելով և ետքը սանթուրլու սոյնն էրիկնին ձգել տալով . —

— Մինչև հիմա քանի՞ հատ եղած է .

Շատ չէ , հիմակուանով երեք :

— Երե՛ք :

Այո՛ , անոնց համար բան մը չէ , որովհետև սորված փորիկ են , և ո՛րչափ գովեմ նէ գովելի են . —

— Հետաքրքրութիւնս բոլորովին կը չարժեցնէ կոր. չարունակէ ,

Եաւաննակութիւնը դալ անգամ :

Ա Զ Դ Ա

Առ Ա. Ա. Տ. — Բայակայութիւնդ երեք է , մինչդեռ քեզի համար մէկն իսկ չատ է , որովհետև դու այն կարգի անձերէն ես , որ պատրաստ և իրաւանց կատարեալ գիտակցութենէ զատ՝ սիրտնիք և արժանիք ունին և հասարակաց համակրութիւնն ու վստահութիւնը կը վայելեն :

Կ'արծեմ կրցի հասկցնել թէ այս ամեն պատճառներով ներելի չէ քեզի բայակայ գտնուիլ :

Ուստի առ քեզ այն առաջին ազդարարութիւնս բաւական կը համարիմ :

Առ Ա. Պ. — Լեզու ունենալդ խնդրոյ ներքև է , որովհետև համր կամ խօսող ըլլալդ ազէկ չեմ յիշեր , բայց սա ազէկ գիտեմ որ ոչ Ա. Ն. Էֆէն-

տիին պէս կը յօրանջէս և ոչ ալ Ս. Հ. էֆէնտիին պէս կը խըռհաս , Հայլ իւրաքանչիւրին կարծիքն ա- զնկ մը կրնէլ ետև՝ քու ալատ քուդ կուտաս :

Նաև բայակայ ալ չես դանուիր . ատ ալ շատ ազնկ է . բայց նայէ որ նաղար չ'առնես :

Ա՛ռ Ս. Ա. — Դու ալ կ'երևայ թէ Ծաղոյի գա- լուս համար բարեխչատակ յառաջդիմական Միու- թեան ազջննալուն կ'սպասես :

Ա՛ռ Տ. Մ. Ա. — Ռու ալ ցարտ չիրմիդ վրայ անմխիթար ցաւոց արցունքներ թափելէ զատ ուրիշ բան չեմ կրնար և միշտ կանիձեմ այն անաղորդ մա- հը՝ որ Ապդին և բարեկամացդ համար դեղեցիկ յոյսերով լի ծաղիկ հաւակիդ չկնայեց և խլեց տա- բուս սև հողին մէջ ծածկելու :

Ա՛ռ Ս. Ֆ. — Թէ որ զահկեմ չըլլար և թէ որ ալթուդ տհաճութիւն մը չունի քենէ, պայն պարապ մի թողար :

Ա՛ռ Ս. Ա. — Ռու ալ բայակայութիւնդ վեյ է: Նորեկ ըլլալուդ՝ պարզ ազդարարութիւն մը բաւա- կան կը համարիմ :

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Ոչ այնքան կարճ և ոչ երկայն հասակով զեր մարդ մը , որուն տարիքն համեմատաբար 75 պիտոյ է ըլլայ , եթէ սխալ չէ այս իմ ենթադրական հա- շիւս : Իր ծննդեան հայրենիքն Ակնայ մօտ Կոտման դիւղն է :

Որովհետև մեր մէջ ժառանգական աշնուապե- տութիւն չկայ , սովորութիւն է որ հարուստներն աշնուապետական կը կոչուին , և ըստ որում Յակոբ Նորատունկեան հարուստ է , այս ընդհանուր սովո- րութեան դէմ մեղանչած չ'ըլլալու համար՝ ազ- նուապետական է , բայց ժողովուրդին սիրտը չկտա- րելու համար՝ անոր հետ ալ կը տեղնուի ու զայն չ'անարգեր , որովհետև , կ'ըսէ , եթէ ժողովուրդ չըլլայ , աշնուապետականութեան և անոր միջև տարբերութիւն չկրնար :

Յակոբ Նորատունկեանի այս տրամաբանութիւ- նը շատ ճիշդ է :

Իր դէմքը սրտին և մտայ պատկերն է :

Կան մարդիկ՝ որ բան մը մտածած ատեննին կամ ձեռքով ճակատնին կը չփեն , կամ թուղթի կտրի մը հետ կը խաղան , կամ գլխուկ բան մը կը տաշեն և կամ ծանր ծանր սիկառ կը քաշեն , բայց Յակոբ Նորատունկեան ոչ այս կըսնէ և ոչ այն, այլ աչքերը կը դոյէ :

Նատած տեղը աչք դոցելն ընկերութեան մէջ ընդհանուր առմամբ ներելի չէ , բայց մանաւար առմամբ ներելի ըլլալուն՝ ինք ալ այս պարագային մէջ մանաւոր կանոնին կը հետևի , բայց որովհետև ամեն բանի մէջ միօրինակութիւնը տաղտկալի է , երբեմն ալ վեր վար կը պտտի . ուստի կը հետևը- նեմ թէ Յակոբ Նորատունկեանի աչքերն ու տա- քերն ալ կը մտածեն . սակայն այդ պատշաճանը եր- կարը մկկէն չեն կատարեր , զատ դատ կը կատա- րեն , որովհետև միևնոյն գործողութիւնը եթէ եր- կարը մկկտեղ ընեն, կըլլայ որ մէջերնին սաստիկ վհատ մը կը ծագի . ուստի երբ աչքերն հոգնին , տա- քերը կը մտածեն , և երբ տաքերն հանգիստ առնեն, աչքերը կը մտածեն , և հետևաբար մին կամ միւս- ը մտածելէ չեն դադրիր , և իր մխքն անդադար կը հակէ այդ երկուքին վրայ ալ :

Ընթերցողք՝ այս բայատրութիւններէս ետև՝ գի- տի ըսեն հիմա թէ քանի որ իր մխքը , տաքերն ու աչքերը կը մտածեն , կը չարժին ու կը գործեն , հարուստ ըլլալու հարկաւ իրաւունք ունի , և այս ճշմարտութեան վերահաստատ ըլլալով՝ ես ալ տակի եարը մնացեալ բաները պիտի ընեմ , որպէս զի հա- րըստանամ , և հարստանալով՝ թերթս մեծցնեմ , ո- րովհետև ինձի համար շատ վատը է , թէև նիւթերն առատ են , և երբ հարուստ ըլլամ , ան ատեն մը- տածութեանս մէկ մեծ մասը վոխանակ թուղթի , գրիչ , մելան , տպագրութեան ծախք , տպագրու- թեան թուղթ , փոստ , փոստոսկի ծախք , ցրտի չքի չարքաշական ևն հոգիներու համար նուիրելու՝ միայն նուիրեր պատրաստելու կը նուիրեմ , և գը- բաղ կը դնեմ որ նոյն ատեն հիմնարկնէն շատ ա- պկ կը գրեմ , բայց քանի որ հիմա հարուստ չեմ , իրաւունք ունիմ հետևցնելու թէ մեր աղդը նուազ ընթերցասէր է :

Ընթերցողք հարկաւ իրաւունք պիտի տան ինձի, որովհետև այս տրամաբանական է :

Յակոբ էֆէնտի Նորատունկեան ուսումնական չէ : Ատոր յանցանքն իրը չէ , այլ ծնողացը որ 75 տարի առաջ չաչխարհ ծներ են :

Եթէ ուսումնական ըլլար , ընդհանուր օրինաց համաձայն՝ ինք ալ հարուստ պիտի չըլլար , որով- հետև ուսումնական և միանգամայն հարուստ ըլլալն այս երկրին մէջ այնքան հազուագիւտ է , որ եթէ մօնէկի համար այնպիսի մէկը գտնուի , կամ հրաշք

համոզելու է և կամ պէտք է վճռել թէ հարստութիւնը ժառանգական է ։

Թէրմիմացութեան տեղի չտալու համար հոս պէտք է աւելցնենք թէ ասոր պատճառն ուսմունքը չէ , ուրիշ բան է , զոր չգիտցուր չկայ ։

Յակոբ Կիվնոի Ներսեսեանց ասոնիկ ուսումնասէր է , որով իր զաւակաց դաստիարակութեանը մեծ հոգ տարած է և բնաւ ծախք խնայած չէ ։

Իր որդին՝ Յարութիւն Կիվնոի Ներսեսեան այս ըսածիս յայտնի ապացոյցն է , ինչպէս նաև այն նուիրատուութիւնները՝ զորս ըրած է ազգային վարժարանաց և կրթական ընկերութեանց ։

Ճաշակը խիստ բարեձիր է ։ Բերայի և Միջագիւղի տուներն այս ըսածս կը հաստատեն ։

Մարմնոյն կազմութեանն հակառակ՝ գանգատ չէ , և գանգատ չըլլալուն համար հարուստ եզած է , որովհետև գանգատ մարդն հարուստ չըլլար . ուստի մարդը գտնելու համար անար արուարին տեսիլն չտեսնելու չէ , այլ գործէն , որովհետև «գործք մարդոյ պատմեն զնմանէ» կըսէ Խիկար , և Յակոբ Կիվնոի Ներսեսեան ալ անոր այս ըսածը գործնական վիճակով կը հաստատէ ։

Դիմոյ գծագրութեանն հակառակ՝ նաև զուարճախօս է , և զուարճութեան համար երբեմն ալ կը խնդայ , ինչպէս կը խնդամ և ես Թէրմիմանը—Հագգպէմի և Օտանլըի Հայոց պէմ զրուածոցը վրայ , որովհետև երբ ատոնք բարեկենդանի հանդերձանաց կը ներկայանան , չխնդալը մարդոս ձեռքը չէ , ուստի կը խնդամ , ու կըսեմ՝ , կեցցէ՛ բարեկենդան ։

Ճանդան գացած ատեն աչքը գեանչն չվերցներ ։ Այսպէս ընելու իրաւունք ունի , որովհետև կը վախնայ թէ մի գուցէ ոտքը փոսի մը մէջ դնէ , ու ինք ալ գլորի . ատոր համար իր բարեկամները այնպէս չէ հեռուցնեն թէ Յակոբ Կիվնոի Ներսեսեան բաւև չառնու համար առջին կը նայի ։

Իր սկզբունքն է քիչ խօսիլ , շատ լսել , բնաթացքն չխոտորիլ և առանց մտածելու չգործել ։

Ազգային կեանքը 40 տարու է , և չորեանակ ազգային պաշտօններու մէջ գտնուած է , որովհետև ազգասէր է և հետևաբար ազգային պաշտօններէ հեռու չմնալը երբէք ։

Քանիցս գերագոյն և քաղաքական ժողովներու անդամակցութիւն ըրած , Բերայի և Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ թաղական խորհրդականութեան պաշտօն վարած և փաստ բաչալի ու գինուելը կղզիի եկեղեցւոյ միաբէվելի եղած , իր ծնած գիւղի եկեղեցին ամբողջ ինք չինած և Գարմանոլի եկեղեցին չինութեան ծախուց խիստ մեծ մասն իր քսակէն նուիրած է ։

Յակոբ Կիվնոի Ներսեսեանց ամենայն պէս անուանական պաշտօն ստանձնել չսիրեր . ատոր համար երբ պաշտօն մ՝ առնէ , կը ջանայ որ բացակայ չգտնուի ։

Սահմանադրութեան խմբագիր Յանձնաժողովոյ անդամ ըլլալով՝ նիստերն ընդհանրապէս իր տունը կ՝ըլլային և Սահմանադրութիւնը գրեթէ ամբողջ իր տունը խմբագրուած է ։

Հետևաբար իր տունն ալ սահմանդրական է ։

1867 ին պատուիրակութեան պաշտօնով Ներսէս վարժապետեանի (Ներկայ Ս. Պատրիարքը) հետ Էջմիածին գնաց և իր ու իրենց բոլոր ծախքերն իր քսակէն վճարեց ։

Ազգային ամեն տեսակ հանգանակութեան և նուիրատուութեանց մասնակցած է և սա ալ էպիլիշ սիլսիլիշ չըլլար և ամենայն պէս նազ տիղ ընելով՝ դիմացինը չտաղտչներ ։

Ուսումնասէր ըլլալն համար ընթերցասէր ալ է , և հետևաբար գրքի մը կամ օգտակար գործի մը հրատարակութեան համար իր անունին հետ քսակն ալ կը նուիրէ ։

Երեսփոխան ալ է ։

Թէպէտ չխօսիր , բայց Գարադաշեան Նշան է-Կիվնոիին պէս այս ինչ նիստին վրայ յառաջիկայ նստին պիտի խօսիմ ըսելով չերևնալիր չ՝ըներ , այլ ամեն նիստերուն ալ գրեթէ ներկայ կը գտնուի և խիստ քիչ անգամ բացակայ կը մնայ ։

Ուսումն ընդ ունեցող և խիստ շատ անգամ բացակայ ջանացող երեսփոխաններէ աղեկ է ։

Թէպէտ չխօսիր , բայց ամենայ պէս մեքենաբար ձեռք ալ չվերցներ , և թեր ու դէմ միանգամայն քաշել չի սար , այլ խնդիրն աղեկ մը հասկնալէ ետև՝ Սերվիչէն Կիվնոիի (եթէ ներկայ ըլլայ) , Օտեան է-Կիվնոիի , Եուսուֆեան Կիվնոիի և Մերեէմ գործի Կիվնոիվի կողմը քաշ կուտայ , որովհետև անոնց սկզբունքներն իր ալ սկզբունքներն են , որով զբաղուարթիւն չենք կրնար իր ազգային սկզբունքները բացատրելու ։

Հետևաբար երբ յիշեալ երեսփոխաններէն մին խօսի , ինք ալ խօսած կ՝ըլլայ ։ և ահա այս պատճառու է որ Յակոբ Կիվնոի Ներսեսեան երեսփոխանը չխօսիր , որովհետև , ինչպէս ընինք , իր սկզբունքներէն մէկն ալ շատ չխօսիլ է ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿ. ՀԱՅՈՑ

ԳՆԱՂԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Դրօշեան Յովհէ վասիլեան

8 Տետրակի մէջ ամբողջացած

Հեղինակին քաղմաչան աշխատութեամբ մեծ ինամքով և մաքուր վիմագրութեամբ պատրաստուած սոյն գեղագրութեան տետրակներու Ա. և Բ. մը արդէն հրապարակ ելած և մխանեըն ալ մամլոյ տակ են,

Այս տեսակ օգտակար գործ մը՝ որ իւր տեսակին մէջ առաջին անգամ լոյս կը տեսնէ ազգային հասատատութեան մը ձեռօք, թէ դիւրուսոյց եղանակաւը, թէ դիրերու վայելչութեամբը, և թէ գնոյն ժանութեամբը՝ արժանի է որ ամեն ազգային վարժարաններ մէջ մուտ գտնէ։

Իւրաքանչիւր տետրը կը բաղկանայ 24 էջէ, հատին գինն է 30 վարայ արծաթ. դպրոցայ և հարիւրէ աւելի աշակերտներու համար մասնաւոր զեղչ կըլլուի։

Կեդրոնատեղին է Միացեալ Ընկ. դրատունը, Գալաթա Կէօյէ—օղլու խան թիւ 13, կը գտնուի ամեն Հայ դրավաճառաց քով։

Հայոց Միացեալ Ընկերութեանց կնիքը չի կրող օրինակները անվաւեր են։

Նորայրի Դաղիներէն—Հայերէն բառարանին տասնուհինգերորդ թերթն հրատարակեցաւ, որոյ մէջ Ա.յր գիրն աւարտած է և Պ կը սկսի։ Այսուհետև ամեն շաբաթ օր կանոնաւոր կերպով կը հրատարակին թերթերն։ Վաճառման գլխաւոր տեղին է Ֆըրէնկեան դրավաճառանոցը, Ուզուն չարշը, թիւ 362։ Որոնք որ կը վարձաբին բաժանորդ դրուիլ մեկուկես օսմանեան ոսկի կանխիկ վճարելով, կրնան դիմել Պ. Ֆրէնկեանի։ Ի դիւրութիւն հասարակութեան թերթերը կը վաճառուին նաև Գալաֆեան և Ղուկասեան դրավաճառաց քով, ինչպես նաև Արշակ էֆէնտիի թղթավաճառանոցը ի Գալաթիա և Վայսի դրավաճառանոցը ի մեծ վողոյն Բերայի։

Գին իւրաքանչիւր թերթին 60 վարա արծաթ։

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Գրեց

ՆԱԶԱՐ Ց. ԳՈՐՈՑԵԱՆՑ

Ամէնամիկ ընտիր երկասիրութիւն մը, որով Մեծ. հեղինակն իւր ողջամիտ դաղափարներովին և մանրախոյզ հետազօտութիւններով խիստ մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ ազգային ամենէն կենսական, այս է դաստիարակութեան խնդրոյն։

Սոյն գործը 100 մեծադիր երեսներէ բաղկացեալ է, և գեղեցիկ տպագրութեամբ Պարտիզպանեան տպարանէն ի լոյս ընծայուեցաւ՝ կը ծախուի եէնի—ճամի Զիլինկիրլէր ճատասէսի, թիւ 24. Ղուկասեան դրատունը։

Գին 5 ղրշ.

Ա. Զ Դ

Կ. Պոլիս Մէրճանը Բիւշտի էֆէնտի խանին դիմացը նոր բացուած «Իտարէ Լօգանթասը» ի ճաշարանապետը՝ որ Հայազգի մ'է, պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ իւր ճաշարանը դիմող ամեն կարգի անձինք խիստ գոհ պիտի ըլլան թէ մաքուր և լինամով պատրաստուած կերակուրներէն և թէ անոնց ժանութենէն։

Վերջապէս իւր յաճախորդները գոհ ընելու մասին ամեն կերպով ջանք և աշխատութիւն զլացած չէ։

Բաժանորդ ըլլողներու համար ալ մասնաւոր զեղչ կըլլայ։

ԱՐՏՕՆԱՏԻՐ Հ. Ե. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳԱՓԱՄՃԵԱՆ